

Բաժնի (էջ 595—631, հատուածներ խնթիւն, Զալա-
լեդդիսէն, Սամուէլէն եւն), Ս. Հասազիդ (էջ 632—
683, Բանաստեղծութիւններ), Պերճ Պրոշեանց (էջ
634—662, հատուածներ Հացի խնդիրներ, Սոս եւ Վար-
դիթերէն), Նս. Վրովեան (էջ 652—668, հատուածներ
Վէրք Հայաստանիէն), Գ. Սունդուկեան (էջ 669—675)
հատուած Պէպոէն)։

Կարգ մը ընտիր գրիչներու եւ գրուածոց,
որոնք կը հանդիսանան ուսուսայ գրականու-
թեան պայծառագոյն ներկայացուցիչները, եւ
իրենց գրաւիչ, ձկուն ոճովը, եւ սահուն լե-
զուաւը օրինակելի եւ նմանելի են ամէնուն։

Հատորս զարգարուած է եւ լուսանկար-
ներով, ամէն հնդկանկի գրուածոց ճակատը
գրուած է գիմանկերը, իսկ համառօտ կենսա-
գրաւորներ մատենին վերջը (էջ 676—83),
հոն կից կը գտնեն ընթերցողը նաեւ համառօտ
բառարան մը (էջ 684—688) այն բառերու,
որոնք ցանցառ են կիրառութեան մէջ եւ հե-
տեւաբար ոչ ամէնուն համար գիւրհասկա-
նալի։

Աւելորդ է երկարագոյն տողերով յա-
նարարել ազգային գործն ազգայնոց. մտահ
ենք, թէ այն Գ. եւ Ե. դասընթացներու ըն-
թերցարան ծառայելէ աւելի առօրեայ ընթեր-
ցանութեան գիրքը պիտի ըլլայ ամէն գեղեցիկ
գրականութիւնը սիրող հայուն։ Կը մաղթենք
արագ հրատարակութիւն Բ. հատորին, ուր
պիտի ամփոփուին մաս մը ուսուսայ այն գրող-
ներու, որոնք Ա. հատորին մէջ տեղ չունին, եւ
յատկապէս Ցաճկահայ գրողները։

Հ. Ն. Ա.



Ն Ո Ր Զ Ո Ւ Ղ Ա կէս դարով յառաջ կամ յիշողութիւնը
անցնելով ժամանակաց. գրեաց Թ. Տ. Ս. Վիննիս,
Միսիթ. Տպարան, 1909, 80 էջ 204: Գին 2 Քր.:

Ծերունի վարժապետի մը յիշողութեանց
մարմնազանն է մատենան՝ Նոր-Ջուղայի վերջին
կէս դարու կեանքին վրայ՝ ազգագրական տեսա-
կէտով։ Թիւղ-Նիւն, հետեւաբար պէտք չէ
խորագրէն դատելով ակնկալել հոն քննական
մանր հետազոտութեանց արդիւնք մը, ինչպէս
օրինակի համար կ'ընծայեն Է. Լալայեանցի եւ
այլոց յօրինուածական աշխատութիւնք Աշխ-
բազմիւ Հաթիւի մէջ։ Այսու հանդերձ հայ ազ-
գագրութեան համար ուսումնասիրութիւն մ'է
արժանի ուշադրութեան, ուր ի շարս անպէտից
կարելի է գտնել եւ ընտիր մարգարիտներ։
Ծերունի վարժապետին կը նկարագրուին հոս

թէ ինչպէս էին կէս դար յառաջ Նոր-Ջուղայ
«Տունք եւ շինութիւնք, քաղաքական վիճակ,
ներքին կոռուավարութեան վիճակ, ընտանեկան
կեանք, Հագուստ եւ զարդք, Ուտելիք եւ ըմ-
պելիք, Հիւանդութիւնք, Մաքրասիրութիւն, Այ-
ցելութիւնք, Ծնունդ, Միտութիւն, Երեխայից
զարգացնելոյ ձեւք, Հարսանիք, Մահ, եւն, ա-
մէնուն վրայ խօսուած բաւական երկար գլուխ-
ներով։

Եթէ պարսաւելի կողմ մը կայ, ըստ մեզ,
այն է առաւելապէս լեզուն, որ շատ անճաշակ
է՝ խառն գրաբար-ուսուսայ-գաւառական մը,
որ շատ տեղեր անհասկանալի ալ է։

Հ. Ն. Ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս Ն Պ Տ Ե Մ Բ Ե Ր

ՊԱՍՄԱԿԱՆ — Կիւրքին կաթողիկոս Վրաց. 267:
ԼԵԶՈՒՆԱԲԱՆԿԱՆ — Անյայ գաւառաբարստը. 267:
— Զօկերլիի «Ընսան» շաղկապը. 273:
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Սասմանց տուն. 274:
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսի
տաղերը. 279:

Հ Ո Վ Տ Ե Մ Բ Ե Ր

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ -- Յուդակ հայերէն Ձեռագրաց Նոր-
Պայազիտի. 289: — Հայերէն Ձեռագիր մը
ի Ս. Փրոքիան. 295:
ԳՐԱԿԱՆ — Գրական դէմքեր. Սմբատ Շահադիդ. 297:
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ — Երեմիա Ձեւակիի Կ. Պոսեյնյոյ Պատ-
մութիւն Ստամբուլայ. 300:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Պոնտական ուսումնասիրութիւնը.
309:

ՀՆԱՄՍՈՒԿԱՆ — Վանկոյ սուրբ Նշանը. 312:
ՄԱՏԵՆԱՍՈՒԿԱՆ — Classification des Dialectes ar-
méniens. 314: — Էջմիածնի տաճարի Տաղան
ձեւերը. 316: — Հացի կտոր Զէյթունցուն. 316:
— Ալէլուիա, Տասնեակ յիմաստաբարկան. 317:
— Շահմանի Փիղղուսի. Դրուագ Արուսիի
Բաքականի. 318: — Հայ գրողներ. 319: — Նոր
Ջուղայ. 320:

ՀՐԱՏԱՄԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԱՆԱՆՏՈՒ ԽՄԱՐԱԿԻՐ

Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՉ

Վ Ի Ե Ն Ն Ա. Մ Ի Բ Ո Ւ Բ Ե Ն Ց Գ Ր Ա Ն